ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2026-1

ք. Երևան «05»_01_2026թ.

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը, ի դեմս ԱԳՆ գլխավոր քարտուղար Դավիթ Կարապետյանի, գործելով նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու, մի կողմից, և «ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոց» ՊՈԱԿ-ը, ի դեմս Դիվանագիտական դպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Տաթևիկ Պետրոսյանի, գործելով Դիվանագիտական դպրոցի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցի (Հայաստանի դիվանագիտական դպրոցի)՝ դիվանագիտական կադրերի պատրաստման «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն» ծրագրի շրջանակներում մինչև 20 մասնակիցների, և «Դիվանագետների և պետական մարմինների արտաքին կապերի ստորաբաժանումների աշխատակիցների վերապատրաստում» ծրագրի, «Հյուպատոսական գործունեություն» ծրագրի, ինչպես նաև օտարերկրյա դիվանագետների վերապատրաստման և այլ ծրագրերի շրջանակներում մինչև 120 մասնակիցների վերապատրաստման և նրանց ստացած գիտելիքների ստուգման կազմակերպման պարտավորությունները ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի 1050 (Վերապատրաստման ծառայություններ) ծրագրով նախատեսված միջոցների շրջանակներում:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված դրամաշնորհը կազմում է 301,467,600 (երեք հարյուր մեկ միլիոն չորս հարյուր վաթսունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

2.2. Պատվիրատուն պարտականությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

2.3. Պայմանագրով ամրագրված գումարի չափը դասընթացների ընթացքում նվազեցման ենթակա չէ:

3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1. կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2. Սույն պայմանագրի 2.1. կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1. կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3. Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, և պայմանագրի պայմանները տարածվում են 2026թ. հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:

4.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	Կատարող
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	«ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոց» ՊՈԱԿ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,	ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարության շենք 2	Կառավարության շենք 2
Երևանի թիվ 1 գանձապետարան	Երևանի թիվ 1 գանձապետարան
Հ/Հ 900011496442	Հ/Հ 900018001470
ՀՎՀՀ 02527728	ՀՎՀՀ 02593734
ԱԳՆ գլխավոր քարտուղար	Տնօրենի ժ/պ
_____ Դ. Կարապետյան	_____ Տ. Պետրոսյան
(անձնագրություն) Կ.Տ	(անձնագրություն) Կ.Տ